ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 146

ք. Երևան 14 .10.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՅՈՒՆԻՄԱՅՆ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 01015289, գործունեության հասցե՝ ՀՀ, Սասունցի Դավիթ 70/8) միջև 15.04.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-10/8-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերությունը 2024թ. 2-րդ եռամսյակում պետք է մատակարարեր 1 հատ էլեկտրաբեռնիչ, որի մասով Պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան Ընկերության կողմից ապրանքի մատակարարում չի իրականացվել:

Հաշվի առնելով, որ «ՅՈՒՆԻՄԱՅՆ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ՝ «ՅՈՒՆԻՄԱՅՆ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ